

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 26-ի ՅՕ-197 օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ» ենթակետով.

«ժ) տեղեկատվություն՝ մշակութային ծառայությունների՝ թատերահամերգային, զանգվածային միջոցառումների, փառատոների, համերգային հյուրախաղերի ժամանակ կատարողների կողմից կենդանի կատարման կամ որեէ տեսակի ձայնագրվածքի (ֆոնոգրամայի) օգտագործման մասին:».

2) 3-րդ կետը «այլ եղանակներով» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ գովազդի բոլոր միջոցները» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հեղինակներ՝ [Լիլիթ Գալստյան](#), [Վահան Հովհաննեսյան](#), [Արտյուշ Շահբազյան](#), [Ռուզաննա Առաքելյան](#), [Արծվիկ Մինասյան](#), [Արա Նռանյան](#), [Արմեն Ռուստամյան](#), [Հրայր Կարապետյան](#)